ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 7, 1956 Общественные науки

Գր. Գրիգորյան

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ՀԵՐՈՍԱԿԱՆ ԷՊՈՍՈՒՄ

Արտաքին ու ներքին հարստահարիչների դեմ էպոսի հերոսների տարած հաղթանակները, նրանց մարտական խաղաղասիրությունն ու ստեղծագործ աշխատանքի տենչը խարսխվել են նաև ժողովուրդների բարեկամության, ամուր հիմքերի վրա, որոնք չեն սասանվել ժողովուրդների կյանքի ամենակրիտիկական պահերին անգամ։ Ժողովուրդների բարեկամությունը իբրև սոցիալական պայքարի հաստուկ զենք իր սուր ծայրով ուղղվել է ազգային ու սոցիալական ճնշումների դեմ։ Այդ պատճառով, որքան ավելի սաստկացել է ազգային ու սոցիալական ճնշումը, այնքան ավելի խորացել ու ամրապնդվել է ժողովուրդների բարեկամությունը որպես նրանց դիմադրողական հզոր ուժի, համատեղ պայքարի ու հաղթանակի նախադրյալ։ Այս շատ լավ հասկացել են թե ազատասեր ժողովուրդները և թե նրանց ստրկացնել ցանկացող ներքին ու արտաքին հարստահարիչները։ Ահա թե ինչու վերջիններս ջանք չեն խնայել խափանել ժողովուրդների բարեկամությունը, սերմանելով նրանց մեջ դրոնական ու ազգային ատելություն, իսկ առաջինները ոչնչացնելով այդ արգելքները, իշխողների կլխի վրայով ձեռք են մեկնել իրար և էլ ավելի ամրապնդել բարեկամության անխզելի կապերը։ Այդպիսին է եղել նաև հայ ժողովուրդը իր բազմադարյան պատմության ընթացքում։ Դրա ապացույցներից մեկն է այն հարուստ բանահյուսությունը, այդ թվում հատկապես «Սասունցի Դավիթ» էպոսը, որի մեջ գեղարվեստական լայն ընդհանրացումներով արտացոլվել է նրա հարգանքն ու սերը հարևան և հեռավոր ժողովուրդների, իսկ ատելությունն ու ցաստմը հայրենի և օտար հարստահարիչների նկատմամբ։ Էպոսի հերոսները՝ հայ բանահյուսության դրական մյուս կերպարների նման, միշտ բարձր են պահել ժողովուրդների բարեկամության ու եղբայրության գրոշը և դաժան դատաստան տեսել բոլոր նրանց հետ, որոնք ցանկացել են դետին տապալել այն։ Էպոսի հերոսների պաշտպանած բարեկամությունը հիմնվել է ժողովուրդների ազատությունը հարգելու և սոցիալ-դասակարգային թշնամու դեմ մղած դարավոր պայքարում միմյանց օգնելու անխախտ սկզբունքի վրա և իբրև այդպիսին հակադրվել իշխողների «բարեկամությանը», որի էությունը ցայտուն կերպով բացահայտված է նույնիսկ հին բանահյուսությունից մեզ հասած փշրանքներում։ Այդ փշրանքները ցույց են տալիս, որ իշխողների ու թագավորների «բարեկամությունը» ամենահին ժամանակներից հետապնդել է նեղ կաստայական նպատակներ և հիմնվել է անձնական շահի, ուժի և կեղծիքի վրա։ Իբրև օրինակ կարելի է հիշել Աժդահակի ու Տիգրանի «բարեկամությունը» և այդ բարեկամության նպատակն ու շարժառիթները։ Դրանց մանրամասն քննությունից երևում է, իրոք, որ Աժդահակի և Տիգրանի դաշինքն ու «բարեկամությունը» ամենից առաջ ուժի բարեկամություն է։ Աժդահակը հանդուրժում է այդ բարեկամությունը այն պատճառով միայն, որ հանձին Տիգրանի տեսնում

է մի հզոր թագավորի, որը անհրաժեշտության դեպքում, առանց դժվարության կարող է ոչնչացնել իրեն։ Այլ կերպ ասած նա բարեկամանում է վախից, իր ինքնությունը ամբողջապես կորցնելու վտանգից և ոչ թե Տիգրանի հետ գաշնակցելու անկեղծ ցանկությունից դրդված։ Այդ «դաշինքի ու բարեկամության» մեջ Տիգրանն էլ տեսնում է իր շահը։ Հանդուրժելով Աժդահակի ինքնությունը, «բարեկամանալով» նրա հետ, նա հզորացնում է իր ռազմական ուժը, իր բացահայտ թշնամիների դեմ կռվելու համար։ Նրանց բարեկամությունն, այսպիսով, կեղծ բարեկամություն է։ Հարստահարիչների կեղծ բարեկամությանը վիպանքում հակադրվել է ժողովուրդների փոխադարձ իսկական բարեկամությունը։

Այդպիսի մի լավագույն ապացույց է նաև հայերի և ալանների բարեկամությունը, որը վիպասանքում դրսևորում է Արտաշեսի և Սաթենիկի ամուսնության միջոցով։ Թե ինչպիսին է եղել այդ հատվածի ժողովրդական նախնական տեքստը, դժվար է ասել։ Բայց մի բան պարզ է, որ այստեղ ամենայն ջերմությամբ գովերգվել է երկու ժողովուրդների բարեկամությունը։ Տվյալ դեպքում իբրև ժողովուրդների ներկայացուցիչներ մի կողմում հանդես է գալիս Արտաշես թագավորը, իսկ մյուս կողմում՝ ալանների թագավորի դուստր Սաթենիկը, որոնք ամբողջությամբ բարձրանալով իրենց պատմական նախատիպերից, ներկայանում են որպես վիպական- գեղարվեստական կերպարներ։ Այսպիսով, վիպասանքի հիշյալ դրվագում մենք փաստորեն գործ ունենք ժողովուրդների մտորումներն ու ձգտումներն արտահայտող վիպական դրական հերոսների հետ, թագավորի կամ թագավորազնի տիտղոսով, մի երևույթ, որը լայն տարածված է հայ և օտար ժողովուրդների հեքիաթների մեծագույն մասում։ Այս տեսակետից Արտաշեսի և Սաթենիկի ամուսնության միջոցով վիպական Արտաշեսի և ալանների թագավորի միջև հաստատված բարեկամությունը ըստ էության հակադրվում է Տիգրանի և Աժդահակի «բարեկամությանը» և հանդես է գալիս, իբրև երկու ժողովուրդների բարեկամություն։ Սրանով է բացատրվում նաև նրանց հարսանյաց արտակարգ շքեղ հանդեսի պատկերումը վիպասանների կողմից.

Տեղ ոսկի տեղայր
Ի փեսայութեանն Արտաշիսի,
Տեղայր մարգարիտ
Ի հարսնութեան Սաթինկանն[1]։

Եթե նրանց միությունը չլիներ երկու ժողովուրդների բարեկամության արտահայտությունը վիպասանները դժվար թե պատկերեին այն, ինչպես չեն պատկերել Աժդահակի ու Տիգրանուհու կեղծ նպատակներ հետապնդող ամուսնական հանդեսը։ Այդ բարեկամության բնորոշ առանձնահատկությունն այն է, որ հիմնված է ոչ թե ուժի, շահի ու կեղծիքի վրա, այլ փոխադարձ սիրո վրա։ Այդ բարեկամությունը հարգում է ժողովուրդների ինքնությունը, նրանց ազգային արժանապատվությունը։ Արտաշեսի և Սաթենիկի ամուսնությունը հանդես է գալիս ոչ իրբև ժողովուրդներին ստրկացնելու և միմյանց վրա անսահման տիրակալության հասնելու միջոց, այլ երկու ժողովուրդների բարեկամության ամրապնդման միջոց։ Նրանց ամուսնությունը ի հակադրություն Աղժահակի ու Տիգրանուհու ամուսնության հետապնդում է ոչ թե ստոր նպա-

[1] Սովսեսի Խորենացւոյ, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 179։

տակներ, այլ միմյանց չկոտրելու «դյուցազանց օրենքի» իրագործմանը և ժողովուրդների միջև հրահրվող «հավիտենական» թշնամության ոչնչացմանը։ Ժողովուրդները չպետք է ստրկացնեն միմյանց, և կամ թշնամանան իրար հետ — ահա Սաթենիկի Արտաշեսին ուղղված խոսքերի խոր իմաստը։

Քեզ ասեմ, այր քաջ Արտաշէս,
Որ հաղթեցեր քաջ ազգին Ալանաց.
Եկ հաւանեաց բանից Աշագեղոյ դստերս Ալանաց
Տալ զպատանիդ.
Զի վասն միոյ քինու ոչ է օրէն դիւցազանց՝
Զայլոց դիւցազանց զարմից բառնալ զկենդանութիւն,
Կամ ծառայեցուցանելով ի ստրկաց կարգի պահել,
Եւ թշնամութիւն յաւիտենական
Ի մէջ երկոցունց ազգաց քաջաց հաստատել[1]։

Ալանների արքայորդու գերությունն այստեղ իբրև վիպական գիծ երկու ժողովուրդների խաղաղասիրական ու բարեկամական ցանկությունների արտահայտման միջոցն է, իսկ Արտաշեսի և Սաթենիկի ամուսնությունը այդ ժողովուրդների դարավոր բարեկամության գեղարվեստական-վիպական դրսևորումը։ Այս փաստը, կրկնում ենք, առավել արժեք է ստանում, երբ նկատի ենք ունենում, որ մենք գործ ունենք ոչ միայն պատմական Արտաշես թագավորի և ալանների պատմական թագավորի աղջկա հետ, այլև գերազանցապես վիպական Արտաշեսի և ալանների, այժմյան օսերի ժողովրդական էպոսի իմաստուն հերոսուհու՝ Շատանեի հետ, որը հայ ժողովրդական վիպասանական երկերում դարձել է Սաթենիկ։ «Սաթենիկ անվան համընկնումը նարտական նշանավոր հերոսուհու՝ Շատանեի (Սատանեի) անվան հետ,— գրում է օսական էպոսի հետազոտողներից մեկը,— դժվար է պատահականություն համարել, մանավանդ, որ Խորենացու ամբողջ պատմությունը միանգամայն պատմական ռեալ անցքերի արձագանքն է...»[2]։

Սրանք են իշխողների կեղծ և ժողովուրդների իսկական բարեկամության վերաբերյալ ավանդական բանահյուսության մեջ դրսևորված ակնառու փաստերը, որոնցով նույնպես հին բանահյուսությունը սերտորեն առնչվում է «Սասնա Ծռեր» էպոսի հետ։ Այս, ըստ էության, գաղափարական կապը նախ մի անգամ ևս ընդգծում է Խորենացու միջոցով մեզ հասած բանահյուսական փշրանքների ժողովրդական բովանդակությունը կամ ոգին և ապա ժողովրդի մեջ լավագույն տրադիցիաների կենդանի մնալու և սերնդից-սերունդ փոխանցվելու ծանրակշիռ հանգամանքը։ Այս, անտարակույս, չի նշանակում, թե էպոսում պատկերված բարեկամությունը ավանդական բանահյուսության մեջ դրսևորված բարեկամության կրկնությունն է։ Բոլորովին. էպոսը այս գծով ևս չէր կարող և չի մնացել ավանդական բանահյուսության մակարդակի վրա՝ այն պարզ պատճառով, որ ձևավորվել է ժողովրդի պատմական զարգացման նոր բարձր աստիճանում (VIII—XII դդ.), արտացոլում է հասարակական նոր՝ ավելի բարդ հարաբերություններ և բանավոր վիճակում շարունակել է ապրել իր ստեղծման օրից ընդհուպ մինչև մեր ժամանակները։ Էպոսի այս վերջին

[1] Մովսէսի Խորենացւոյ, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 178։
[2] «Нартский эпос», Сборник статей, 1949, стр. 46.

չափազանց կարևոր առանձնահատկությունը հնարավորություն է տվել վիպասանների բազմաթիվ սերունդների ավելի խորն ու ամբողջական ներկայացնելու ժողովրդի կյանքի ու պայքարի, ինչպես մյուս կողմերը՝ այնպես էլ ժողովուրդների օրավուր ամրապնդվող բարեկամությունը, որն էպոսում նույնպես դրսևորվել է ամենից առաջ հայերի և այլազգիների ներկայացուցիչների միջև տեղի ունեցած ամուսնական ակտի ու դրա հետևանքով ստեղծված խնամիական կապերի ձևով։

Այլազգիների հետ մեր հերոսների ամուսնության փաստերը շատ են էպոսում։ Բացառությամբ մեծ Մհերի, էպոսի բոլոր գլխավոր կերպարները ամուսնանում են այլազգիների հետ։ Սանասարն ու Բաղդասարն, օրինակ, ամուսնանում են Պղնձե քաղաքի թագավորի աղջիկների հետ (Ա. 142), Դավիթը պարսկուհի («պարսիկ մեկ խանըմ ըմ կիլնի Խանդութ Խանըմ», Ա 57), կամ ադրբեջանուհի Խանդութի, իսկ փոքր Մհերը Գյուրջու աղջկա հետ, որն իմանում ենք Մսրա Մելիքի թոռներին պատժելու համար հորեղբոր խնդրանքով Սասուն վերադարձած իրեն իսկ Մհերի խոսքերից։

Խերախոտ խորոխպեր, վիր իլի՛
Իմ թագավորութին գետին իմ դրի,
Քաղաք իմ գյուրվին թասլիմ իմ էրի
Իմ գյուրգ Գյուրջու աղջկան թասլիմ իմ էրի։
Ա. 230

Պատումներից մեկում (Ը պատում) Գորգեզ իշխանը, որ ներկայացնում է վրաց ժողովրդին, Մհերի քեռին է, որից նա ձեռք է բերում Քուռկիկ Ջալալին (Բ. 264)։ Այս փաստերը պատահական փաստեր չեն։ Ընդհակառակն, դրանք դարեր շարունակ տեղի ունեցող ու հարևան ժողովուրդների մեջ ևս քաղաքացիական իրավունք ստացած կենցաղային սովորույթի գեղարվեստական արտացոլումն են։ Այլ կերպ ասած, դրանք տիպական փաստեր են, որովհետև արտահայտում են ժողովուրդների բարեկամական ձգտումները և խորապես համապատասխանում են պատմական իրականությանը։ Այդ փաստերը ցույց են տալիս, որ ամուսնանալով այլազգիների հետ՝ էպոսի հերոսները, հետևապես և ժողովուրդը ըստ ամենայնի ժխտում են ժողովուրդների միջև եղած կրոնական տարբերություններն ու ազգային խտրականությունը և դրանով իսկ լայն ճանապարհ բացում նրանց մերձեցման ու բարեկամության համար։ Հատկանշական է, որ ստեղծված բարեկամական կապերի հետևանքով էպոսի հերոսները անձնուրաց կերպով օգնում են բարեկամ ժողովուրդներին՝ բնության ու հասարակության չար ուժերի դեմ նրանց մղած հերոսական կռիվներում։ Սանասարն ու Բաղդասարն, օրինակ, Քառասուն Ճող Ծամին և նրա քրոջը «Քաջանց» երկրից կամ պղնձե քաղաքից բերելու ժամանակ ոչնչացնում են ծովում նստած մարդակեր ու ջրարդել վիշապին և վերջինիս երկվորյակ թագավորի 60 գոմշանման (=վիշապանման) և «փահլևաններին» (Ա. 843—844), իսկ Դավիթն ու փոքր Մհերը՝ Խանդութի ու Գոհարի երկրների վրա հարձակված թշնամիներին։ Այսպիսով, նրանք ժողովրդին մի դեպքում ազատագրում են ֆիզիկական ոչընչացումից, մյուս դեպքում ստրկացման սպառնալիքից։ Այս պարզ ցույց է տալիս, որ ամուսնական կապերի միջոցով դրսևորված նրանց բարեկամությունը հիմնված է ոչ թե շահի ու կեղծիքի վրա, այլ թշնամիների դեմ համատեղ մղվող կռվի սկզբունքի վրա, ոչ թե ամուսնության միջոցով նոր երկրներ տիրե-

լու ձգտման, այլ այդ երկրների ժողովուրդների ինքնությունը հարգելու սկզբունքի և իրենց՝ կանանց նկատմամբ տածած անկաշառ սիրո վրա։ Բնորոշ է այս տեսակետից այն փաստը, որ Սանասարն ու Բաղդասարը Քառսուն Ճող Ծամին բերելիս չեն մտածում տիրանալ այդ երկրին։ Դավիթը հակառակ խանդության թախանձանքներին, հրաժարվում է Կապուտկողում մնալուց և նրա վրա իշխելուց (Ա. 40)։ Նույն կերպ է վարվում նաև փոքր Մհերը Գոհարի հետ։ Այս սկզբունքից որոշ շեղում է կատարում մեծ Մհերը միայն, Մսրա Մելիքի կնոջ հետ կենակցելու և նրա երկիրը ժամանակավորապես տիրելու իր արարքով։ Այս վարքագիծը դուր չի գալիս վիպասաններին, այդ պատճառով էլ նրան դատապարտում են անժամանակ մահվան։ Մհերի նկատմամբ վիպասանների ցուցաբերած նմանօրինակ վերաբերմունքը միայն վիպասանների անհատական վերաբերմունքը չէ, այլ ամբողջ ժողովրդի վերաբերմունքը, ճիշտ այնպես, ինչպես հարևան ժողովուրդների նկատմամբ էպոսի հերոսների ցուցաբերած վերաբերմունքն ու նրանց ցույց տված օգնությունը հերոսների անհատական վերաբերմունքն ու օգնությունը չէ, այլ ժողովրդի վերաբերմունքն ու օգնությունն է։ Այս տեսակետից պարզ է միանգամայն, որ էպոսի հերոսները և նրանց այլազգի կանայք հանդես չեն գալիս իբրև լոկ անհատներ, այլ հանդես են գալիս իբրև այն ժողովրդի մարմնացումը, որին պատկանում են նրանք։ Ահա թե ինչու նրանց կապն ու միությունը դադարում է անհատների նեղ անձնական կապ լինելուց և դառնում է հայ ու հարևան ժողովուրդների անխորտակ բարեկամության արտահայտությունը, ժողովուրդների եղբայրության սիմվոլը։

Սակայն ժողովուրդների բարեկամության դրսևորումն էպոսում գլխավոր հերոսների ամուսնական կապերով չի սպառվում։ Այն արտահայտվում է նաև նրանց և հարևան ու օտար ժողովուրդների ներկայացուցիչների միջև ստեղծված ընկերական, եղբայրական կապի ու փոխհարաբերության միջոցով։ Սանասարն ու Բաղդասարը, Մհերն ու Դավիթը ժողովրդից կտրված մենակյացներ և կամ իրենց անձից դուրս ոչինչ չտեսնող էգոիստներ չեն։ Ընդհակառակը, նրանք ժողովրդի կյանքով ապրող և իրենց անձը լավագույն բարեկամներին զոհելու պատրաստ մարդիկ են։ Անձնական երջանկության ամենաբարձրագույն աստիճանում անգամ նրանք չեն մոռանում ժողովրդի մարդկանց, այլ հանդես են բերում մեծ հոգատարություն ու սեր։ Իրենց գործողություններում նրանք միշտ և ամենուրեք առաջնորդվում են ժողովրդական հումանիզմի սկզբունքներով։ Հենց այս է, որ նրանց թշնամիների նկատմամբ դարձնում է դաժան և անզիջում, իսկ ժողովրդի մարդկանց նկատմամբ բարի և հոգատար, հենց այս է, որ բարեկամացնում ու «ախպերացնում» է նրանց իրենց նմանների հետ։ Բնորոշ է այս տեսակետից Սանասարի ու Բաղդասարի և Քառսուն Ճող Ծամին սպասող փեսացուների բարեկամությունը։ Աշխարհի տարբեր ծայրերից հավաքված այդ երիտասարդ փեսացուներին իր քսաղաքի պարիսպների տակ կախարդական «հավաքի» միջոցով Քառսուն Ճող Ծամը այլանդակում է և դարձնում զառամյալ ծերունիներ։ Այդ պատճառով նրանք մոռացած Քառսուն Ճող Ծամին մտածում են միայն այդ երկրի սահմաններից փախչելու մասին։ Այս բանում օգնում են նրանց երկվորյակ եղբայրները։ Պղնձե քաղաքի թագավորին և նրա փահլևաններին հաղթելուց հետո, Սասուն մեկնելիս Քառսուն Ճող Ծամի միջոցով նրանք երիտասարդացնում են նրանց։ Ավելին, իրենց ջանքերով բերված Քառսուն Ճող Ծամին առաջարկում են քառասուներկու փեսացուներից ընտրել նրան, որին նա սրտանց սիրում է։

Քառասուն Ճող Ծամն, իհարկե, բռնում է Սանասարի ձեռքը։ Սակայն այդ չէ կարևորը։ Կարևորն այստեղ այն է, որ նրանք չեն հանդուրժում չարությունը և չար գործը, ով էլ կատարած լինի այն։ Կարևորն այստեղ նրանց նկատմամբ երկվորյակ եղբայրների ցուցաբերած խորը մարդասիրական վերաբերմունքն է, որը արձագանք գտնելով երիտասարդ փեսացուների մեջ, մղում է նրանց անկեղծ, անկաշառ եղբայրության ու բարեկամության (Ա. 155)։ Ժողովրդական նույն հումանիզմը բարեկամության է մղում նաև Դավթին ու Խանդութի սիրուն սպասող քառասուն փեսացուներին։ Ամուսնանալով Խանդութի հետ, բարոյապես հաղթելով նրա փեսացուներին, նա անմարդկային է համարում վշտահար թողնել նրանց։ Այդ պատճառով նրանց իր հետ տանում է Ադրբեջան և քառասունին էլ ամուսնացնում (Ա. 220)։ Նկատելի է, որ մեր հերոսները ախպերանում են այլազգիների հետ ոչ թե քեֆի սեղանի շուրջը, այլ նրանց գլխին կախված վտանգի ժամանակ, նրանց փրկության ու ազատության համար մղած կռվի մեջ։ Փոքր Մհերի և Հալաբա քաղաքի յոթ հսկաների միջև իսկական բարեկամություն է ստեղծվում միայն նրանց թշնամու՝ մարդակեր պառավի դեմ Մհերի համարձակ ելույթով։ Ինչպես մյուս հերոսները, այնպես էլ Մհերը բարեկամների համար չի խնայում իր անձը։ Դուրս գալով մարդակեր պառավի դեմ, նա փաստորեն վտանգի է ենթարկում իր կյանքը։ Չնայած դրան, նա հետ չի կանգնում այդ կռվից, որովհետև բարվոք է համարում զոհվել, քան անօգնական թողնել իր «ախպերներին» մարդակեր պառավի կերպարանքով հանդես եկող սոցիալ-դասակարգային թշնամու առաջ։ Այսպիսով, նրանք կոնկրետ գործով են հաստատում ու ամրապնդում ձևոր լերված բարեկամությունը։ Նույն կերպ են վարվում նաև մեր հերոսներին բարեկամության ձեռք մեկնող հարևան ժողովուրդների ներկայացուցիչները։ Նրանք նույնպես անձնուրաց են ու հավատարիմ, անկեղծ են ու չարամ՝ բարեկամի, իսկ դաժան ու անխնա՝ թշնամիների նկատմամբ։ Իրրև օրինակ կարելի է հիշել Գորգիզին, որը պատումների մեծագույն մասում վրացի է, և որպես այդպիսին ներկայացնում է վրաց ժողովրդին։ Գորգիզի և Դավթի բարեկամությունն սկսվում է Խանդութի տանը և խորանում ու ամրապնդվում է այն անձնուրաց օգնությամբ, որ ցույց է տալիս Գորգիզը Դավթին նրա թշնամիների դեմ մղած կռիվների ընթացքում։ Գորգիզի անկեղծ բարեկամությունը փրկում է Դավթին սպանությունից։ Այն պահին, երբ Խանդութի քառասուն փեսացուները սրերը մերկացրած հարձակվում են գինովցած Դավթի վրա՝ Գորգիզը սթափեցնում է նրան գոչելով՝ «Սանհեր Դավիթ հոգի վնասատուն է, Վրաստուն չէ»։

Գինին զԴավիթ վերուց, ու զԴավիթ տարավ,
Երոր Դավիթ հրմլա կեղնի,
Էն գինուց գլուխ կը ցածցու գետնի վրրեն,
Էն մարգեր ղուրանց թրեր կը քաշեն, տր զարկեն
Ու երոր գլուխ վի կը վերու
Չթրեր կը ղնեն ուրանց չոգի տակ։
Հեղրմ լե, որ հրմալ էղավ,
Քավոր Գորգիզ կանչեց,— սանհեր Դավիթ
Հոդի վնասատուն է, Վրաստուն չէ։
Դավիթ երոր լսեց, ասեց,
Գիդի զդուռ բռնե։

(Ա. 31.)

Դավթին Գորգիզի ցույց տված օգնությունը, և նրա իբրև բարեկամի հավատարմությունը պատկերելու հետ միասին, այստեղ Խանգութի դավադիրներով լի «վնասատունը» հակադրված է բարեկամներով լի «Վրաստանը» (=Վրաստանին), որը վտանգի ժամին շատ անգամ է գորավիգ կանգնել հայ ժողովրդին։ Հայ և վրացական սկզբնաղբյուրների վկայությամբ վրաց ժողովուրդը հայերի հետ արաբների դեմ միացյալ ուժերով պայքարելուց բացի, արաբների դեմ միայնակ ապստամբած և պարտություն կրած հայերին հաճախ է ապաստան տվել Վրաստանի տերիտորիայի արաբների կողմից չգրավված մասերում։ «Սրանից հետո,— գրում է 11-րդ դարի վրաց Անանուն պատմիչը,— եկավ հագարացվող ամիրան՝ Աբուլ-Կասիմ անուն, Աբու- Սաջիի որդին, արաբացին։ Սրան ուղարկել էր Ամիր-Մումլին մեծ և անհամար զորքով, որին երկիրը չէր տեղավորում։ Նա նախ մտավ Հայք (Ստմխիթ) և ավերեց ամբողջ Հայքը (Ստմխիթը), Սյունիքը, Վայոց-Ձորն ու (վ)ասպուրականը, Ասփուրականը։ Ձդիմանալով նման ավերածությանը՝ Սմբատ հայոց (Սոմեխների) թագավորը փախուստի դիմեց և ուղղվեց Ափխազաց լեռների կողմը, և այնտեղ էլ մնաց»[1]։ «Ի դառն և ի նեղ ժամանակիս» հայ ժողովրդին վրաց ժողովրդի ցույց տված օգնության մասին տեղեկություններ են տալիս, ինչպես արաբական շրջանի, այնպես էլ հետագա դարերի հայ պատմիչներն ու գրիչները։ 15-րդ դարի մի գրիչ, օրինակ, իր ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում Հայաստանի վրա Լենկ Թեմուրի որդի Շահրուխի 1436 թ. կատարած բարբարոսական ու ավերիչ արշավանքների և «Վրաց աշխարհում» հայերի ապաստանելու մասին գրում է. «Ցանկացող եղէ այս հոգելից տառիս ի դառն և ի նեղ ժամանակիս, որ որդի մեծի խորազմին Թամուրին՝ Շահռուխին կոչեցել, չորս անգամ, բազում հեծելոք, անգութ և անագորոյն և անաղորմն և ծարաւի արեան քրիստոնէից՝ Երեկ ի վերայ աշխարհիս Թաւրիզոյ, որ բազում և անասելի աւերած ի վերայ աշխարհիս հայոց։ Զի զոր սրով կոտորեաց, և զոր անողորմ գերի վարեաց և կորոյս, և զոր սովամահ՝ եղան, և զոր մահն տարաւ, զորս գայլք և գազանք կերան և պատառեցին, և մնացեալքն այսր և անդր փախեան բնաջինջ և մտին աշխարհին վրաց»[2]։

Պատմական այս փաստերի և նմանօրինակ մի շարք հանրահայտ փաստերի վիպական արձագանքը պետք է համարել նաև այն էպիզոդը, որտեղ Ծովինարը իր տղաներին՝ Բաղդադի խալիֆի կամ կռապաշտ թագավորի դեմ ապստամբած Սանասարին ու Բաղդասարին խորհուրդ է տալիս գնալ Վրաստան և ապաստանել Գորգիզ (Գորգիդ) թագավորի մոտ։ «Որդիկ, փախե՛ք, գացեք Գորգիզ թագավորի քաղաքն, որ ձեր խեր ձեզի չմատղա կոչերին» (Բ. 138)։ Անկասկած է, այսպիսով, որ ի դեմս Դավթի ու Գորգիզի ընկերական կապի ու վերջինիս անկաշառ օգնության, իր տղաներին Ծովինարի տված խորհրդի և «Հոգի վնաստուն է, Վրաստուն չէ» առածատիպ խոսքի, մենք գործ ունենք հայ ու վրաց ժողովուրդների դարավոր բարեկամության գեղարվեստական-վիպական արտահայտությունների հետ։

Սրանք են հայ և հարևան ու օտար ժողովուրդների ներկայացուցիչների ընկերական-եղբայրական կապի ու փոխադարձ օգնության միջոցով դրսևորված

---

[1] Պրոֆ.-գր. Լ. Մելիքսեթ-Բեգ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Երևան, 1934, էջ 202։

[2] Ալիշան, Հայապատում, Բ., էջ 537։

բարեկամության փաստերը։ Դրանք կարելի է շարունակել, էպոսն այդ հնարավորությունը տալիս է, բայց բերածներն էլ բավական են համոզվելու, որ բարեկամությունը էպոսի հերոսների համար պատահական ու էպիզոդիկ երևույթ չէ, այլ հանդիսանում է հերոսների էությունը, նրանց գործողությունների ուղենիշ գաղափարը։ Եվ այդ ոչ միայն այն պատճառով, որ Սանասարն ու Բաղդասարը, Մհերները ու Դավիթը ժողովուրդների բարեկամությունն ամրապընդող անհատներ են, այլև գլխավորապես այն պատճառով, որ նրանք բարեկամասեր հայ ժողովրդի մարմնացումն են, նրա մտորումների ու ցանկությունների արտահայտիչը։

Անհրաժեշտ է նշել, սակայն, որ էպոսը չի սահմանափակվում միայն իսկական բարեկամության դրսևորումով։ Այն իբրև կյանքի ռեալիստական բազմակողմանի արտացոլում վեր է հանում ու մերկացնում նաև իշխողների կեղծ բարեկամությունը, որն ըստ էության հակադրվում է ժողովուրդների անշահախնդիր բարեկամությանը, և դրա անձնվեր պաշտպաններին։ Եվ իրոք, եթե ժողովրդի մարդկանց բարեկամության է մղում ժողովուրդների շահը, որը մանրամասն ցույց կտրվի նաև հետո, ապա հարստահարիչներին բացառապես իրենց անձնական շահը, հարստահարիչների դասակարգային շահը։ Եվ քանի որ դրանք բացարձակապես անհարիր են ու հակասական, և որ մեկի գոյությունը պայմանավորված է մյուսի ժխտմամբ, այդ պատճառով էլ էպոսը ժողովրդի ու հարստահարիչների և կամ նրանց ներկայացուցիչների բարեկամության ոչ մի փաստ չի տալիս։ Ժողովուրդը կամ նրան ներկայացնող անհատները չեն բարեկամանում, չեն հաշտվում տիրողների հետ, ինչպես հաղթանակի, այնպես էլ պարտության դեպքերում։ Սասունցի Դավիթն, օրինակ, «քառասուն գազ» հորում անգամ փրկություն չի խնդրում Մսրա Մելիքից։ Նա քաջ գիտակցում է, որ փրկություն խնդրել նրանից, կամ «ախպերանալ» նրա հետ, նշանակում է իրեն դատապարտել ստրկության։ Այդ պատճառով բարվոք է համարում մեռնել խոր հորում, քան խնդրանքով, ի սեր «ախպերության» ազատվել այնտեղից։ Նա չի զիջում թշնամուն, անհաշտ ու անողոք է նրա նկատմամբ որտեղ և ինչ պայմաններում էլ գտնվելիս լինի։ Դրան հակառակ նա կովի ամենաթեժ պահին «ախպերանում է» ժողովրդի ներկայացուցիչ արաբ զորականի, իսկ մի այլ դեպքում Բաբը Ֆրենկի քաղաքի աշխատավորության հետ և այլն։ Բարեկամության դավթյան կամ ժողովրդական ըմբռնումն, այսպիսով, ժխտում է հարստահարիչներին, հանում ժողովուրդների պաշտպանության, հանում նրանց փոխադարձ սերտ կապի և անկաշառ օգնության։ Սրանով է բացատրվում ժողովրդի ներկայացուցիչների ամուսնական, ընկերական ու եղբայրական կապերի անկեղծությունն ու հարատևությունը, ջերմությունն ու ամրությունը։ Բարեկամության հիշյալ հատկանիշներով էլ նրանք հակադրվում են հարստահարիչների «բարեկամությանը», որն էպոսում ևս հետապնդում է բարեկամների երկրները զավթելու նպատակ և հիմնված է կեղծիքի և սարսափի վրա։ Էպոսում իբրև այսօրինակ բարեկամության կողմնակիցներ հանդես են գալիս ժամանակների նոր ածդահակներ՝ Մսրա Մելիքը, Քուլընկի դևը և բոլոր թագավորները։ Սրանք բարեկամության առաջարկ են անում էպոսի ազգային դրական հերոսներին, երբ լսում են նրանց ամենահաղթ ուժի մասին, կամ, երբ իրենց կաշվի վրա զգում են այդ ուժի հզորությունը։ Մսրա Մելիքն, օրինակ, «ախպերանում է» մեծ Մհերի, իսկ Քուլընկի դևը փոքր Մհերի հետ այն բանից հետո, երբ պարտվում են նրանցից։

Մհեր վերցրեց Դևին, տվեց գետին,
Դև, ասավ.— որ ուխտ եմ արե
Իմ քուր պըտի տամ քեզի,
Ես էլ քեզի ախպեր ըլլիմ։
Բ. Բ. 309

Դավթին աշխարհի բոլոր թագավորները «բարեկամության» առաջարկ են անում, երբ իմանում են, որ նա սպանել է Մսրա Մելիքին, այսինքն, երբ համոզվում են, որ նրան կարելի է հաղթել միայն դավադրությամբ, կեղծ բարեկամության քողի տակ։ «Դավթի համբավն էնպես տարածվեց հըմեն կողմ, որ ուրիշ շատ թագավորներ ուզին ընդոր հետ բարեկամութեն անեն» (Բ. Բ. 198)։ Հասկանալի է և միանգամայն տրամաբանական, որ այսօրինակ բարեկամները պետք է խզեին և խզում են իրենց կապերը, զավթում են բարեկամի երկիրն ու ստրկացնում ժողովրդին, երբ հանգամանքների բերումով թուլանում է վերջինս։ Այսպես է վարվում, օրինակ, Մսրա Մելիքը իր բարեկամ մեծ Մհերի հետ։ Սրա մահից անմիջապես հետո նա հարձակվում է Սասունի վրա, տիրում ու կողոպտում է այն և ստրկացնում ու «խարջի» տակ դնում ժողովրդին։

Ջուաբ տվեցին Մսրա Մելիքին
Թի «Սասնա Մհեր մահացեր ի,
Սասուն անտեր մնացեր ի»։
Մսրա Մելիք ասքար առավ,
Գնաց զարկեց Սասնա վերեն,
Սասնա երկիր քարուքանդ արավ
Արավ խողում հավասար։
Ա. 789

Միանգամայն կեղծ նպատակներ է հետապնդում նաև Մսրա Մելիքի կին Իսմիլ Խաթունը, Մելիքի մահից հետո մեծ Մհերին ամուսնության առաջարկ անելով։ Նա սիրո միջոցով դավում է Մհերին, այնպես, ինչպես՝ Աժդահակը Տիգրանին։ Ամուսնանալով Մհերի հետ Իսմիլ Խաթունը Աժդահակի նման հետապնդում է ագրեսիվ նպատակներ։ Նա ձգտում է հզոր ժառանգ ունենալ Մհերից և այդ ժառանգի միջոցով հետագայում հանգցնել «Սասնա օջախը», զավթել Հայաստանն ու հայ ժողովրդին։

Մհեր ան մեկ օր դրսուց իրը տուն
Կը տեսնը՝ կնիկ ղոկ լաճ կը խաղցրցը,
Կը խնդանա, կըսը.
«Մեր մեռնի քիչ Մսրա Մելիք,
Մսրա օջախ կայնացրցիս,
Սասնա օջախ փրճըսրցիս»։
Ա. 547

Մհերն այս առիթով կշտամբում է Իսմիլ Խաթունին՝ ասելով «Քու միտ չարը, դու չարութին շանք կըտաս քու լաճուն» (Ա. 548)։ Իսմիլ Խաթունի վարքագծին Մհերի տված այս գնահատականը բնութագրական է էպոսի բոլոր հարստահարիչներին և «բարեկամական» այն կապերին, որ ամուսնական ու այլ միջոցներով հաստատում են նրանք իրար միջև և ժողովրդի մարդկանց միջև։ Սրանք են էպոսում դրսևորված կեղծ բարեկամության փաստերը, որոնք իբրև ժող-

վուրդների բարեկամությանը և նրա ըմբռնումներին հակադիր ըմբռնման արտահայտություններ, ամբողջապես և անվերապահորեն ժխտվում են։ Դրանք պատկերվել են միայն մեկ նպատակով՝ հարստահարիչների ագրեսիվ ձգտումների մերկացման և իսկական բարեկամության բուն էության ընդգծման նպատակով։

Բարեկամության ժողովրդական ըմբռնումը, սակայն, չի սպառվում ոչ հարստահարիչների կեղծ «բարեկամության» ժխտումով և ոչ էլ հայ ու հարևան ժողովուրդների ներկայացուցիչների վերոհիշյալ ամուսնական ու ընկերական կապերի պատկերումով։ Այն ունի ավելի լայն ընդգրկում, սոցիալ-քաղաքական ավելի ամուր հիմքեր, որոնք որոշակի արտահայտվում են ուրիշ ժողովուրդների ազգային ու սոցիալական ճնշման դեմ մեր հերոսների մղած պայքարում, զավթողական պատերազմների ժխտման և խաղաղության անձնվեր պաշտպանության մեջ։ Բայց սրանք ոչ միայն ժողովուրդների բարեկամության հիմնաքարերն է։, այլև նրա դրսևորման ձևերն ու միջոցները։ Ուրեմն, խոսել դրանց պատկերման մասին էպոսում, նշանակում է հենց խոսել ժողովուրդների բարեկամության բուն արտացոլման մասին։

Հայտնի է, որ էպոսի դրական բոլոր հերոսները՝ սկսած Սանասարից, վերջացրած արտատեր աղքատ կնոջով, անձնվեր պայքարում են օտար զավթիչների դեմ, ոմանք թրով ու գյուրզով, ոմանք էլ գլխավոր հերոսներին տված իրենց խրատներով ու խորհուրդներով, նրանց մեջ բռնության նկատմամբ ցասում ու ատելություն արմատավորելով։ Օտար հարստահարիչների դեմ մղած պայքարի ծանրությունը իր ուսերի վրա կրել է բացառապես ժողովուրդը, այդ պատճառով նա մասսայաբար հանդես է բերվել նաև հիշյալ կռվի արտացոլումն հանդիսացող էպոսում, անկախ այն բանից, որ գլխավոր հերոսները իրենց վարքագծով ու մտորումներով ներկայացնում են հենց ժողովրդին։ Հանդես գալով էպոսում, ժողովուրդը հերոսաբար պայքարելուց բացի հետևել է իր հերոսներին և ճիշտ ու նպատակասլաց ընթացք տվել նրանց գործողություններին։ Դրան, ի թիվս բազմաթիվ օրինակների, իբրև ապացույց կարող է ծառայել նաև այն փաստը, որ Դավթի հայրենասիրական գործողությունների սկիզբը դնում է արտատեր կինը, հայտնելով նրան Մսրա Մելիքի կողմից ուղարկված Կողբադինի դաժան հարկահանության մասին։ Ազգային թշնամու դեմ մղված կռվին նրա մասնակցությունը այդ փաստով չի սպառվում, իհարկե։ Սակայն խնդիրն այդ չէ, այլ այն, որ նա ոչ միայն մատնացույց է անում դեպքը, այլև հորդորում է Դավթին նրանց հետ դաժան դատաստան տեսնելու համար, վառում է Դավթի հայրենասիրական զգացումները և դրանով իսկ կրկնապատկում նրա հզորությունը։ Դավթին պառավ կնոջ և ժողովրդի մյուս ներկայացուցիչների (ախալթցիներ, սասունցիներ և այլոց) ցույց տված օգնությունը ավելի է ընդգծում Մսրա Մելիքի հարկահանների և նրա զորքի դեմ մղված կռվի համաժողովրդական բնույթը։ Ազգային թշնամիների դեմ մղված կռվի հենց այդ համաժողովրդական բնույթով է բացատրվում այն հաղթանակը, որ տանում են հերոսները նրանց նկատմամբ։ Այդ ակնհայտ է և դրա վրա կանգ առնելն ավելորդ է։ Այստեղ պետք է բերենք մի քանի փաստեր միայն, ցույց տալու, որ ազգային թշնամու դեմ հայ ժողովրդի մղած պայքարը և ուրիշ ժողովուրդների նույնանման պայքարին նրա ցույց տված օգնությունը միաժամանակ ժողովուրդների համհրաշխության և բարեկամության համար մղած

պայքար է, ժողովուրդների եղբայրության ամրապնդմանը ցույց տված օգնություն։ Այս տեսակետից պերճախոս են Պղնձե և Կանաչ քաղաքներում իբրև օտար հարստահարիչների հանդես եկող ջրարգել վիշապների դեմ Սանասար և Բաղդասար եղբայրների մղած կռիվները։ Այդ քաղաքների ժողովուրդների խրնդրանքով սպանելով երկիրն ավերող վիշապներին, նրանք օգնության ձեռք են մեկնում նրանց՝ ազգային ճնշման դեմ մղված պայքարում և դրանով իսկ բարեկամության հիմք դնում սասունցիների ու այդ ժողովուրդների միջև։ Սանասարն ու Բաղդասարը նույնպիսի օգնություն են ցույց տալիս նաև Յոթ-Ճող-Ծամ Գոհարին։ Նրա խնդրանքով սպանում են երկրի վրա հարձակված 40 դեվերին և ժողովրդին ազատագրում ստրկացումից։ «Սանասար ինչ կանես արա, գրում է Յոթ-Ճող-Ծամ Գոհարը, խետ ախպորտ Պաղտասարին, ձիգ օգնության արի, դևեր կայներ են կռիվ կուզեն, ես մենակ եմ չեմ կանա կայնի ինոնց դեմ» (Բ. Բ. 398)։ Նույն ենք տեսնում նաև մեծ Մհերի ու Դավթի գործողություններում։ Մեծ Մհերը սպանելով սպիտակ դևին, իսկ Դավիթը Ջանփոլատ դևին, ըստ էության, ազատագրում են հարևան «ախլաթցիներին» արտաքին թշնամիներից և բարեկամություն հաստատում սասունցիների և «ախլաթցիների» միջև։ Այս է վկայում նաև այն ջերմ ընդունելությունը, որ ցույց են տալիս Դավթին ախլաթցիները դևին սպանելուց հետո նրա քաղաք մտնելու ժամանակ։

Պետք է նկատել, սակայն, որ էպոսի ինչպես մյուս ճյուղերում, այնպես էլ հատկապես Դավթի ճյուղում արտաքին հարստահարիչների դեմ մղված պայքարը չի սահմանափակվում դևերի և վիշապների դեմ մղված պայքարով։ Դավիթն իբրև հայ ժողովրդի ազգային անկախության հերոսական պաշտպան դևերի ու վիշապների կերպարանքով հանդես եկող թշնամիներից բացի մարտնչում է նաև սասունցիների և մյուս ժողովուրդների ազգային միանգամայն իրական-պատմական թշնամիների դեմ։ Դրանցից են ամենից առաջ Մսրա Մելիքը իր «Խաչ պարոններով», Բաբը Ֆրենկը, Աջմու Շապուհը, Շրբկան Խորասականը և բանաստեղծական անուններով կամ ուղղակի իբրև «թագավոր» ու «կռապաշտ» հանդես եկող բազմաթիվ օտար հարստահարիչներ։ Դրանցից է, օրինակ, հենց առաջին ճյուղում արաբ հարստահարիչներին ներկայացնող «կռապաշտ» թագավորը, որին սպանում են երկվորյակ եղբայրները։ Սանասարն ու Բաղդասարը սպանելով իրենց կռապաշտ հորը, որը հայերի դեմ մղած յոթնամյա կռվում պարտվելուց հետո գերությունից մի կերպ ազատվելու պատճառով «ուխտել» էր զոհել նրանց իր «կռքերին», ազատագրում են արտաքին թշնամուց ոչ միայն Գագիկ թագավորին, այլև կռապաշտ թագավորի սեփական ժողովրդին և նրա կողմից ստրկացված մյուս ժողովուրդներին։ Դավիթը սպանելով Մսրա Մելիքին ազատագրում է ոչ միայն սասունցիներին ու արաբ ժողովրդին, ինչպես վկայում է «զոռով» կռվի դաշտ բերված արաբ ծերունին, այլև Մսրա Մելիքի լծի տակ հեծող մյուս ժողովուրդներին։ Դավիթը ճիշտ նույն նպատակն է հետապնդում նաև Բաբը Ֆրենկին ու նրա «ջոջ մարգերին», Շրբկան Խորասականին, Աջմու Շապուհին և մյուսներին սպանելով։

Եվ եթե նկատի ունենանք, որ ի դեմս Բաբը Ֆրենկի և «Խաչ պարոնների» էպոսի ասացողները ներկայացնում են բյուզանդական ագրեսորներին և եվրոպական բոլոր զավթիչներին, իսկ ի դեմս Աջմու Շապուհի, Շրբկան Խորասականի, Բեզլար-Բեգերի և այլոց պարսկական, սելջուկյան ու մոնղոլական զավթիչնե-

ին, ապա միանգամայն պարզ կդառնա, որ վերոհիշյալ բոլոր օրինակներում մենք գործ ունենք ինչպես արաբների, այնպես էլ Անդրկովկաս ներխուժած արտաքին մյուս հարստահարիչների դեմ անդրկովկասյան ժողովուրդների համատեղ մղած իրական պատմական կռիվների հետ։ Այդ կռիվներից հիշատակության արժանի է ամենից առաջ այն հերոսական դիմադրությունը, որ միացյալ ուժերով ցույց են տալիս հայերն ու վրացիները Անդրկովկաս ներխուժած արաբական չարդարարներին։ Հայերի և վրացիների համատեղ պայքարի շնորհիվ է, որ արաբները երկար ժամանակ չեն կարողանում գրավել ոչ Հայաստանը և ոչ էլ Վրաստանը։ Հայերը օգնության ձեռք են մեկնել նաև աղվաններին (ադրբեջանցիներին) և նրանց հետ միասին Բաբեկի գլխավորությամբ համատեղ հերոսական կռիվ մղել արաբների դեմ։ Հանրահայտ է հայերի, վրացիների, ադրբեջանցիների և կովկասյան մյուս ժողովուրդների համատեղ պայքարը բյուզանդական կայսրության դեմ 10-րդ դարի երկրորդ կեսին, սելջուկների դեմ 12-րդ դարի վերջերին և 13-րդ դարի սկզբներին (1199—1210), մոնղոլների դեմ 13-րդ դարի կեսին (1249) և այլն։ Հայերի, վրացիների, ադրբեջանցիների և կովկասյան մյուս ժողովուրդների հողերի վրա ոտնձգություն կատարող օտարերկրյա զավթիչների դեմ այդ ժողովուրդների մղած վերոհիշյալ համատեղ պայքարը վկայում է նրանց դարավոր բարեկամության մասին, ազգերի համերաշխության ու եղբայրության մասին։ Հայերի և հարևան ժողովուրդների համատեղ պայքարի ու փոխադարձ օգնության այս պատմական փաստերը չէին կարող դուրս մնալ և դուրս չեն մնացել էպոսն ասացողների տեսադաշտից ու էպոսից, որովհետև դրանք կատարվում էին այն դարերում, երբ վերջնականապես ձևավորվում էր էպոսը։ Եվ մենք տեսնում ենք, որ հիշյալ իրադարձությունները և հետագա դարերում կատարված նմանօրինակ քազմաթիվ այլ իրադարձություններ իրենց գեղարվեստական արտացոլումն են գտել էպոսում վերը բերված այն եղբայրական օգնության միջոցով, որ ցույց են տալիս մեր հերոսները հարևան ժողովուրդներին և նույնը փոխադարձաբար ստանում նրանցից։

Ժողովուրդների բարեկամությունն, այսպիսով, ինչպես պատմական իրականության մեջ, այնպես էլ էպոսում, բարձրացել է օտար հարստահարիչների դեմ մղված համատեղ պայքարի ամուր հիմքերի վրա։ Այս է նրա կենսունակության կարևորագույն նախադրյալներից մեկը։

Էպոսում արտացոլվել է նաև հարևան և օտար ժողովուրդների սոցիալ-դասակարգային պայքարին Դավթի ու մյուս գլխավոր հերոսների ցույց տված օգնությունը, որը նույնպես պետք է դիտել իբրև ժողովուրդների բարեկամության արտահայտություն։ Որպես օրինակ հիշենք հենց թեկուզ Բաբը Ֆրենկի ու նրա բոլոր «ջոջ մարդերի» դեմ Դավթի կռվի և նրանց սպանելուց հետո քաղաքում, այսպես կոչված, «դեմոկրատական ինքնավարություն» ստեղծելու փաստը, ինչպես նաև աշխատավորությանը Դավթի ուղղած այն խոսքերը, թե «որ դուք նեղ կընգնեք ընձի թուղթ գրեք, ճամբեք իս կրգամ» (Ա. 465)։ Հարևան և օտար ժողովուրդների ու նրանց ներքին հարստահարիչների հետ նույն կերպ է վարվում նաև փոքր Մհերը։ «Չար աշխարհի» դեմ մղած կռիվների ընթացքում նա շատ անգամ է ժողովուրդներին ազատագրում իրենց սեփական տերերից։ Գոհարի խնդրանքով, օրինակ, հալեպցիներին ազատում է Բուրսայի հարկահաններից (Բ. Բ. 527), իսկ յոթ եղբայրների խնդրանքով նրանց իրենց քաղա-

քի թագավոր մարդակեր պառավից։ Նա ջերմորեն սիրում և սիրվում է Աղրբեջանի, «Գյուրջստանի» և «Թուրքեստանի» ժողովուրդների կողմից նրանց ցույց տված եղբայրական օգնության համար (Ա. 298—299)։ Կարելի է բազմապատկել օրինակները, բայց բերածներն էլ բավական են համոզվելու, որ էպոսի հերոսները իրենց ստեղծող ժողովրդի նման պայքարել են ոչ միայն սեփական, այլև հարևան ու հեռավոր ժողովուրդների ներքին հարստահարիչների դեմ, այդ նույն ժողովուրդների հետ միասին։ Այս տեսակետից ոչ մի հիմք չկա ժխտելու, որ դրանք և դրանց նման մի շարք այլ փաստեր իրական-պատմական հանրահայտ անցքերի՝ 9—11-րդ դդ. Հայաստանից Աղվանք, Ասորիք, Բյուզանդական կայսրության արևելյան նահանգներն ու Բալկաններն անցած պավլիկյան ու թոնդրակյան հակաֆեոդալական շարժումների արձագանքները կամ վիպական դրսևորումները չեն։ Ինչպես պավլիկյաններն ու թոնդրակյանները հիշյալ երկրներն անցնելով այդ ժողովուրդների հետ համատեղ պայքարում էին նրանց սեփական հարստահարիչների դեմ, օգնում նրանց սոցիալական ազատագրությանը, և դրանով իսկ, բարեկամություն հաստատում հայ և այլ ժողովուրդների միջև, այնպես էլ էպոսի հերոսները ու հատկապես փոքր Մհերը, իբրև պավլիկյան ու թոնդրակյան շարժումների հիմնական գաղափարը՝ ֆեոդալիզմի դեմ պայքարը իր գործողությունների մեջ դրսևորող կերպար, հարստահարիչներին սպանելով և իշխանությունը տվյալ երկրի ժողովուրդներին հանձնելով սերտ ու անխախտ բարեկամություն է հաստատում սասունցիների և վիպական անունների տակ հանդես եկող ժողովուրդների միջև։ Այս բոլորը ցույց են տալիս, որ էպոսը հարազատորեն վերարտադրել է պատմական իրադարձությունների ոգին, ժողովուրդների բարեկամության և համերաշխության գաղափարը։ Նույնն ենք տեսնում նաև զավթողական պատերազմների ժխտումն ու խաղաղության պաշտպանությունն արտացոլող և ժողովրդի ստեղծագործ աշխատանքը պատկերող էպիզոդներում։ Պատերազմել պատերազմի դեմ, վերացնել կամ սանձահարել վերջինիս հրձիգներին, նշանակում է վերացնել ժողովուրդների բարեկամության ամենաառաջիմ թշնամիներին։ Ահա թե ինչու խաղաղության և ստեղծարար աշխատանքի համար զավթողական պատերազմների դեմ էպոսի ազգային և այլազգի հերոսների մղած պայքարը միաժամանակ ժողովուրդների բարեկամության համար մղված պայքար է և այդ բարեկամության արտահայտությունը։ Կարելի է ասել, այսպիսով, որ թե պատմական իրականության մեջ և թե այդ իրականության գեղարվեստական արտացոլումն հանդիսացող էպոսում հայ և հարևան ժողովուրդների բարեկամությունն ամրապնդվել է արտաքին ու ներքին հարստահարիչների դեմ մղած հերոսական կռիվներում նրանց համատեղ թափած արյունով։

Այսօրինակ բարեկամությունն ինքնին ժխտում է իշխողների քարոզած ազգային ատելությունը՝ նացիոնալիզմը։ Էպոսի ազգային և այլազգի դրական բոլոր հերոսներին խորթ է այդ գաղափարը։ Դրան հակառակ նրանք խորապես հարգում ու սիրում են իրար, պաշտպանում են միմյանց շահերը, կապվում են իրար հետ խնամիական ու ընկերական կապերով և իրար տուն դնում իրև եղբայրներ։ «Շատեր քուրդ, խայ կըլնին ախպեր, մեկ մեկի տուն կերթան» (Ա. 415), ասում է որդուն Իսմիլ Խաթունը։ Հայ ժողովրդի սերը դեպի հարևան ու հեռավոր ժողովուրդները այն աստիճան ջերմ է ու անշահախնդիր, որ ծանկի է բերում էպոսի մի շարք պատումներում իրև հայ ժողովրդի ազ-

գային ոխերիմ թշնամի հանդես եկող Իսմիլ Խաթունին և ստիպում նրան խոստովանել ու պաշտպանել Դավթի, ուրեմն և հայ ժողովրդի խաղաղասիրական, բարեկամական վարքագիծը, հակադրելով այն իր տղային՝ Մսրա Ս ելիքի զավթողական և հարևան ու օտար ազգերի նկատմամբ ցուցաբերած ջարդարարական վարքագծին։

Մելիք, է քու խելք չի կտուի
Որ դա Դավթի խետ աղեկ ըլներ.
Դավիթ քու խուսք տաներ։
Աղեկ, Դավթի մոտ չգնացիր,
Դավիթն էլ չի կանչեր քո տուն,
Էլ քու դավին ի՞նչ էր Դավթի խետ,
Որ դու ճամբխիր, յոթ տարվա խարճ ուզիր,
Էդա քառասուն երկեն, քառասուն կարճ կենկտի՞ր ինչ էր։
Քառասուն աղչկտի՞ր ինչ էր։
Քո արված որ դու էրիր,
Հալա Դավիթ ի՞նչի էրիր.
Դավթի արած հալա քիչի։
Ա. 415

Ազգային ատելության իսպառ բացակայությունը, ժխտումը էպոսում այդ փաստով չի սպառվում, որովհետև հայ ժողովրդի ծանոթությունն ու շփումը արարներով չի սահմանափակվում։ Թե պատմական իրականության մեջ և թե այդ իրականության էպիկական, անախրոնիկ արտացոլումն հանդիսացող էպոսում նա շփվել կամ բախվել է մեծ թվով ազգերի ու ժողովուրդների և կամ նրանց ներկայացուցիչների հետ, սակայն ոչ մի տեղ առաջ չի քաշել ազգային խտրականության գաղափարը։ Այսպես է վարվել նույնիսկ այն դեպքերում, երբ իր առաջ կանգնել է բացարձակ թշնամին։ Նա բոլոր դեպքերում թշնամու մեջ տեսել է ոչ թե ազգային կամ կրոնական տարբերությունը և պայքարել նրա դեմ այդ հողի վրա, այլ ամենից առաջ ու բացառապես իրեն հարբստահարիչին և կռվի է ելել միայն այդ հողի վրա։ Այս է պատճառը, որ նրանց դեմ մղված կռիվները, հակառակ մի քանի նացիոնալիստ «ասացողների» (Հ. Նրգեյան և այլն) չի ներկայացվել իբրև կրոնական կամ այլազգիների դեմ մղված կռիվներ, այլ ներկայացվել է իբրև ժողովրդական ազատագրական կռիվներ։

Էպոսի հերոսները միշտ խորին հարգանքով են վերաբերվում այլազգիներին իբրև այգպիսիների և նրանց կրոնական համոզմունքներին։ Մի քանի անգամ Կոզբադինը և Մսրա Մելիքը ավերում են Մարութիկը և սպանում վանքի սպասավորներին։ Դրանից Դավիթը կսկիծ է ապրում և վրեժով լցվում թշնամիների նկատմամբ, սակայն, երբեք նրանց մասին չի խոսում իբրև կռապաշտի կամ այլակրոնի, երբեք չի ժխտում կռապաշտությունը կամ մահմեդականությունը։ Այդպես են նաև մյուս հերոսները։ Նույնիսկ Մհերը, որին սխալմամբ վերագրում են «կռապաշտությունը» վերցնողի դեր, հոր սպանության վրեժն առնելիս կռապաշտ Սուլթանին տարբերում է կռապաշտ աշխատավորից, սպանում է միայն Զմշկիկ Սուլթանին կամ Բանա Խանումին և ոչ երբեք կռապաշտ ժողովուրդին (Ա. 165, 1021 և այլն)։ «Ո՞վ է սպանել Դավթին,— հարցնում է Մհերը։— Ես, ասեց Բանա Խանումը։ Բռնեց Մհեր Բանա Խանումի երկու թևեր,

ծամեր կապեց Քուռկիկ Ջալալիկի պոչին. քշեց, ըսաց,— Քուռկիկ Ջալալիկ, տար սար ու ձոր փշուր-փշուր էրա, ամեն կտոր մեկ տեղ թող էկո, իմ սիրտ հանգստանա» (Բ. Բ. 616)։ Մեր հերոսները չէին կարող և չեն ժխտել այլազգիների կռապաշտությունն ու մահմեդականությունը և կամ հակադրվել վերջիններիս հենց թեկուզ այն պատճառով, որ Էպոսի և ոչ մի պատումում հանդես չեն եկել իբրև մոլեռանդ քրիստոնյա հավատացյալներ, այլ ընդհակառակն, ակնհայտ հակակրանքով են վերաբերվել եկեղեցական ծիսակատարություններին, եկեղեցուն և նրա սպասավորներին։ Մահը նույնիսկ զենքը ձեռքին կռվում է աստծու հրեշտակների և իրեն իսկ աստծու դեմ (Ա. 1085, Բ. 347)։ Հերոսների գործողությունների հիմքն ու առաջնորդող ուժը ժողովուրդների շահերի պաշտպանության ու նրանց բարեկամության գաղափարն է և ոչ ազգային ու կրոնական տարբերության հողի վրա ատելություն հրահրելու ժողովրդակործան սկզբունքը։ Մեր հերոսները անողոք են բոլոր հարստահարիչների ուրեմն և ժողովուրդների բարեկամության թշնամիների նկատմամբ, ինչ ազգի ու կրոնի էլ պատկանելիս լինեն նրանք։ Բաբը Ֆրենկը, Խաչ պարոնները, և բազմաթիվ այլ արտաքին հարստահարիչներ քրիստոնյաներ են, բայց այդ չի խանգարում էպոսի քրիստոնյա հերոսներին անխնա դատաստան տեսնել նրանց հետ։ Քառասուն Ճող Սամը, Խանդութ Խաթունը, Գոհարը, Գորգիլը, արաբ ծերունին, Բաբը Ֆրենկի քաղաքի «պստիկները», ախլաթցիները և բազմաթիվ ուրիշներ այլազգիներ են, իսկ դրանցից շատերը նաև այլակրոններ, բայց այդ չի խանգարում, որ մեր հերոսները ամուսնական, ընկերական, եղբայրական կապերով և թշնամու դեմ մղված համատեղ պայքարի միջոցով սերտորեն կապվեն նրանց հետ, սիրեն նրանց, հոգան նրանց մասին։ Այդ, անշուշտ, այլազգիների և ոչ քրիստոնյաների նկատմամբ էպոսի ասացողների, ուրեմն և ժողովրդի ցուցաբերած վերաբերմունքի արտահայտությունն է, որը դրսևորվել է ոչ միայն հերոսների գործողությունների ու վարքագծի մեջ, այլև վիպասանների ուղղակի խոսքում։ Բնորոշ է այս տեսակետից այն փաստը, որ պատումներից մեկի վերջաբանում ասացողը բազմաթիվ ցանկությունների հետ միասին այլազգիներից մեկի լեզվով (ադրբեջաներեն) աստծուց ողորմություն է խնդրում նաև իրեն հայտնի յոթանասուն երկու ազգերի «Յոթանասուն երկու ազգի դու ողորմաս» (Բ. Բ. 318)։ Հիշատակության արժանի են ի վերջո օտար և հատկապես հարևան ժողովուրդների լեզուներով գործածված այն բազմաթիվ բառերն ու դարձվածքները, առածներն ու ասացվածքները, թևավոր խոսքերն ու բանաձևումները և նույնիսկ երգերը (քրդերեն), որոնք առատորեն սփռված են էպոսի գրեթե բոլոր պատումներում։ Այս բոլորից հետո միանգամայն անհիմն է պրոֆ. Մ. Աբեղյանի այն պնդումը, թե «Մեր վեպի մեջ հայոց վերաբերմունքը դեպի այլազգիները շատ բնականորեն թշնամական է ընդհանրապես» (Հայ ժողովրդական վեպը, էջ 204, Թիֆլիս, 1908)։ Էպոսի և ոչ մի պատումում այսօրինակ պնդման հիմք չի տալիս։ Եվ պատահական չէ, որ իր կարծիքը հիմնավորելու համար Աբեղյանը չի կարողացել համապատասխան մեջբերում անել։ Նա բերել է միայն Դավթի հարցին Հովանի տված խրատական պատասխանը, «որդի, դուշման, բաս մարդ սաղ կըթողնի» (4689, ԲԲ. 298), որտեղ, սակայն, սպանված երկու գերիների մասին, իբրև այլազգիների և ոչ քրիստոնյաների հեռավոր ակնարկ անգամ չկա։ Խանդութի երկրի վրա նրանց հարձակման, պարտության և սպանության ամբողջ պատմությունը ցույց է տալիս, որ նրանք օտար դավթիչներ ու ջարդարարներ են, և որ Հովանը սպանում է նրանց հենց դրա համար և ոչ այն բանի

համար, որ նրանք այլազգիներ են։ Մեր հերոսներն այսպիսով իրենց ստեղծող ժողովրդի նման երբեք սուր չեն բարձրացրել այլազգիների դեմ իբրև այդպիսիների։ Նրանց անսահման խորթ և օտար է ազգային խտրականությունն ու ազգային ատելությունը։ Մերժելով այդ, նրանք ամբողջ ուժով պաշտպանել են ժողովուրդների բարեկամությունն ու եղբայրությունը, որոնք խարսխված են նրանց շահերի, երազանքների ու սպասելիքների նույնության և իրար նկատմամբ տածած խոր հարգանքի ու հավատի վրա։ Ամուսնական և ընկերական սերտ ու անշահախնդիր կապեր, համատեղ անձնուրաց պայքար արտաքին ու ներքին հարստահարիչների դեմ, ազատության և ինքնության հերոսական պաշտպանություն, ազգային խտրականության և ազգային ատելության ժխտում, փոխադարձ օգնություն և ջերմ ու անկաշառ սեր միմյանց նկատմամբ — ահա էպոստում դրսևորված բարեկամության էությունը և այդ բարեկամության ժողովրդական ըմբռնումը։